# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000164, 1-ին դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԱԾ Է

2024-08-13, «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

ՀՀ, ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 83, 40 ԲՆ.

Գործողության ժամկետը՝ 13.08.2029թ.

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 045/4 - 25

<<06>>_ մայիսի _2025թ

ԼԻՑ ՔՊԼ-000164, 1-ին դաս

*Պատվիրատու՝* ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

*Նախագծող՝* <<ԱՄԷԼԻ>> ՍՊԸ

**Տնօրեն՝** Ա. ԴԱՎԹՅԱՆ

<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն նախագծային փորձաքննությունը դիտարկելով ՀՀ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Մարգարյան 2-րդ նրբ. 8 շենքի ետնամասի տարածքի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:

Նախահաշվային արժեքը կազմում է՝ 25 035.87 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ- ն:

Առդիր՝ եզրակացությունը 2 էջից:

**Տնօրեն՝** Ն. Սիրեկանյան

«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

տնօրեն Ն. Սիրեկանյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Մարգարյան 2-րդ նրբ. 8 շենքի ետնամասի տարածքի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը

Պատվիրատու՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Նախագծող՝ <<ԱՄԷԼԻ>> ՍՊԸ

Տնօրեն՝ Ա. ԴԱՎԹՅԱՆ

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նախատեսվում է Աջափնյակ վարչական շրջանի Մարգարյան 2-րդ նրբ. 8 շենքի ետնամասի տարածքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում:

Նախագծով նախատեսված է հետևյալ շինարարական աշխատանքների իրականացում՝ տարածքի մաքրում և պատրաստում շինարարական աշխատանքների համար, հողային աշխատանքների իրականացում, քանդման և ապամոնտաժման աշխատանքների իրականացում: Շինարարական աղբի բարձում և տեղափոխում: Խճի նախապատրաստական շերտի իրականացում, բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով, ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում, բետոնե դեկորատիվ սալիկներից անցուղիների կառուցում, խաղահրապարակում ռետինե ծածկույթի իրականացում: Նոր նստարանների, խաղասարքերի և աղբամանների տեղադրում ամրացումով: Մետաղական ցանկապատի պատրաստում և տեղադրում, մետաղական մասերի երկտակ ներկում: Հենապատի կառուցում և երեսապատում բազալտե սալերով: Պատերի ցեմենտ-ավազե սվաղում և նկարազարդում, բուսահողի փռում կանաչ տարածքներում, սերմի ցանում: Աստիճանների և թեքահարթակի կառուցում և երեսապատում բազալտե սալերով, մետաղական բազրիքների պատրաստում և տեղադրում: Ցայտաղբյուրի պատրաստում և տեղադրման աշխատանքների

իրականացում: Նախատեսվում է իրականացնել արտաքին լուսավորության համակարգ արևային լուսատուներով և ոռոգման ցանց:

*Նախահաշվային մաս*

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով

Հաշվարկը կազմում է՝ **25 035.87** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ- ն:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը 2616.31 և մեքենաների շահագործման ինդեքսը 3138.23

Նյութերի արժեքն ընդունված է 2025թ. N 02 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

*Ուսումնասիրելով ներկայացված նախագիծ- նախահաշիվը*

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

*Տնօրեն* *Ն. Սիրեկանյան*

*Փորձագետ* *Տ.Վիրաբյան*